



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

21 մարտի 2012 թ. ԹԻՎ 38-Մ-2

«ԲԱՑ ԹՈՂՆՎԱԾ ԴԱՍԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» մասին ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 1716-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրությամբ՝

Հաստատել Համալսարանի ուսանողների բաց թողնված (բացակայած) դասերի լրացման հետևյալ կարգը.

1. Ուսանողները պարտավոր են ուսուցման մասին պայմանագրով նախատեսված պայմաններով և Համալսարանի կողմից սահմանված կարգով ու ժամկետներում կատարել ուսումնական ծրագրերով նախատեսված բոլոր առաջադրանքները, հաճախել դասերին՝ առանց ուշացման:

2. Եթե ուսանողը՝ ուսուցման մասին պայմանագրով նախատեսված վարձավճարի սահմաններում և Համալսարանի կողմից սահմանված ուսումնական ծրագրերով և ժամանակացույցով նախատեսված դասերից բացակայել է, Համալսարանի կողմից նախատեսվում են լրացուցիչ վճարովի դասընթացներ, հետևյալ պայմաններով՝

ա) 2 շաբաթ և ավելի տևողությամբ առարկաների ցիկլային պարապմունքներից բացակայելու դեպքում ուսանողը պարտավոր է լրացնել յուրաքանչյուր բացակայած դասի<sup>1</sup> համապատասխան շաբաթը.

բ) դասերի բացթողումը (բացակայելը) դասերին չներկայանալն է և այն բացակայությունները, որոնք նշանակվել են ուսանողի՝ դասերից ուշանալու պատճառով:

Դասից ուշացում է դիտվում դասի մեկնարկից և դասամիջոցից հետո ուշացումը.

գ) գործնական պարապմունքներին հաճախումների գրանցումը դասախոսի կողմից պետք է կատարվի դասի մեկնարկից հետո 5 րոպեի ընթացքում՝ ուսումնական մատյանում: Դասախոսություններից բացակայությունները գրանցվում են համապատասխան մատյաններում.

դ) ուսանողի ներկայության դեպքում դասամատյանի համապատասխան վանդակում պետք է գրանցվի «ն» տառը, իսկ բացակայության դեպքում՝ «բ» տառը:

3. Սույն կարգը վերաբերում է՝

ա) ընդհանուր բժշկության ֆակուլտետում՝ ուսուցման 4-րդ և բարձր տարիներին,

բ) ստոմատոլոգիական ֆակուլտետում՝ ուսուցման 3-րդ տարվա երկրորդ կիսամյակին և բարձր տարիներին,

գ) դեղագիտական ֆակուլտետում՝ ուսուցման 4-րդ և բարձր տարիներին:

4. Լրացուցիչ դասընթացները, որպես կանոն, անցկացվում են ձմեռային և ամառային քննաշրջանների ընթացքում, որոնց ժամկետները սահմանվում են ռեկտորի կողմից:

5. Լրացուցիչ դասընթացների համար վճարման չափը որոշվում է՝ ելնելով ռեկտորի կողմից հաստատված յուրաքանչյուր առարկայի կրեդիտների գնացուցակից՝ համապատասխան ժամկետների համամասնական չափերով:

6. Ուսանողների բացակայությունները քննարկվում են և ներկայացվում է եզրակացություն՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի նախագահությամբ

---

<sup>1</sup> Ցիկլերի ընթացքում դասի տևողությունը համընկնում է յուրաքանչյուր օրվա ուսուցման տևողությանը

յամբ անցկացվող ուսումնական խորհրդի կողմից, որի կազմի մեջ են մտնում ուսումնամեթոդական վարչության պետը, համապատասխան ֆակուլտետների դեկանները, հաշվապահական բաժնի և իրավաբանական բաժնի ներկայացուցիչները, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից ներգրավված այլ աշխատողներ, ինչպես նաև ուսանողության ներկայացուցիչներ: Եզրակացությամբ հարգելի համարվող բացակայությունների հետևանքով լրացման վճարները փոխհատուցվում են Համալսարանի կողմից կամ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

7. Լրացուցիչ վճարովի դասընթացներին իրենց ցանկությամբ՝ կամավոր կարող են մասնակցել նաև դասերին լիարժեք մասնակցած բոլոր կուրսերի ուսանողները:

8. Պարտադիր լրացուցիչ դասընթացների համար դասախոսի ընտրությունը կատարվում է համապատասխան ամբիոնի վարիչի և դասախոսի համաձայնությամբ, իսկ կամավոր լրացուցիչ դասընթացների համար՝ ամբիոնի վարիչի, դասախոսի և ուսանողի համաձայնությամբ:

9. Պարտադիր լրացուցիչ դասընթացների համար համապատասխան դասախոսը վճարվում է հիմնական դասաժամերի համար սահմանված չափերով, իսկ կամավոր լրացուցիչ դասընթացների համար՝ ռեկտորի կողմից որոշված կարգով:

10. Սույն Կարգը տարածվում է նաև ռազմաբժշկական ֆակուլտետի կուրսանտների վրա: *(Լրացում՝ 27.12.2012, հր. 130-Մ-1)*

Ռեկտոր

Մ. Զ. Նարինյան